



**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔ**

Երևան, 2020

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Սույն հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և
կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

Սույն հետազոտությունը իրականացվել է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի
քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի
գործողություններին» ծրագրի շրջանակում:

Ներածություն

Դատական իշխանության և դատավորների անկախությունը հանդիսանում է դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության նախապայման, մինչև ժամանակ դրա ապահովումն անմիջականորեն փոխկապակցված է դատավորների նկատմամբ կիրառվող պատասխանատվության հետ: Այս համատեքստում դատավորների նկատմամբ թափանցիկ և հրապարակային կարգապահական մեխանիզմների սահմանումը առաջնային է, հատկապես որ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը կարող է օգտագործվել նաև որպես դատավորների գործունեությանը միջամտելու և ազդեցություն ունենալու լծակ: Ոլորտին առնչվող միջազգային չափանիշների համաձայն դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ընթացակարգերը պետք է լինեն հստակ և օբյեկտիվ, թափանցիկ և հրապարակային, ապահովեն դատավորի համար արդար դատաքննության երաշխիքները, իսկ ողջ գործընթացը պետք է իրականացվի անկախ մարմնի կողմից: Ավելին, պետք է բացառվի կարգապահական ընթացակարգերի օգտագործումը՝ որպես դատավորների նկատմամբ հետապնդման իրականացման և նրանց դատական գործունեությանը միջամտելու գործիք: Սույն վերլուծությունը միտված է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների անհրաժեշտ թափանցիկության գնահատմանը և դատավորների անկախության երաշխիքների ամրապնդմանն ուղղված առաջարկությունների ներկայացմանը:

Հակիրճ անդրադարձ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օրենսդրությանն ու դրա փոփոխությունների ընթացքին

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների շրջանակներում պարբերաբար անդրադարձ է կատարվել դատավորների կարգապահական պատասխանատվության հարցերին: Այսպես, Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով նախատեսվել էր բարեփոխել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու ընթացակարգերը, տարանջատել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցող և կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտներին, ուսումնասիրել հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդման հարցն ու Արդարադատության խորհրդի նիստերի դոմբացության խնդիրը, ապահովել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի¹ գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը և այլն²:

2015 թ.-ի Սահմանադրության փոփոխություններով նախատեսվեց Բարձրագույն դատական խորհուրդի ստեղծումը, որը հռչակվեց դատարանների և դատավորների

¹ Հանձնաժողովը մի քանի անգամ վերանվանվել է, այդ իսկ պատճառով սույն աշխատանքում հիմնականում օգտագործվում է «կարգապահական հանձնաժողով» եզրույթը:

² Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր (այսուհետ՝ ՀՀՊՏ) 2012.07.11/33(907) Հոդ.827, 30.06.2012:

անկախության երաշխավորը և, ի թիվս այլ լիազորությունների, օժտվեց նաև դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ: Սահմանադրական փոփոխությունների հիման վրա ընդունված «Հայաստանի Հանրապետության դատականօրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսվեց, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն կարգապահական հանձնաժողովն ու լիազոր մարմինը (արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը)³: Վերջիններս կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում են կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում, կամ վարույթի հարուցումը մերժվում է⁴:

2019 թվականի հունիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզով ընդգծվեց այնպիսի ռազմավարական փաստաթղթի ընդունման անհրաժեշտությունը, որը կնպաստի դատական իշխանության անկախության և արդյունավետության ամրապնդմանը, ինչպես նաև դրա նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը⁵: Իսկ արդեն 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը (այսուհետ նաև՝ Ռազմավարություն), որով առանձնահատուկ նշանակություն տրվեց դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների կատարելագործմանը՝ դատական համակարգի անկախության ամրապնդման համար: Հատկանշական է, որ 2020 թ.-ի մարտի 25-ին Ռազմավարությամբ ամրագրված գործողությունների իրականացման նպատակով ՀՀ դատական օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, ներառյալ կարգապահական վարույթների, կարգապահական հանձնաժողովի կազմի, կարգապահական պատասխանատվության հիմքերի առնչությամբ, սակայն կարգապահական հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությունը խթանելու համար բավարար երաշխիքներ չեն սահմանվել⁶:

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների պրակտիկ խնդիրները

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումների մի զգալի մասը մերժվում է Կարգապահական հանձնաժողովի կողմից, որի արդյունքում այդ հաղորդումները երբեք չեն հասնում Բարձրագույն դատական խորհուրդ: Միննույն ժամանակ եթե Բարձրագույն դատական խորհրդում առկա է որոշակի թափանցիկություն և կարգապահական վարույթների վերաբերյալ որոշումներն ու այդ որոշումների հիմքում ընկած պատճառաբանություններն ու

³ Հետագայում՝ 25.03.2020 թ.-ին, նման իրավասությամբ օժտվեց նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ:

⁴ ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ.143, 07.02.2018:

⁵ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 666-Լ որոշում:

⁶ ՀՀՊՏ 2020.04.22/43(1598) Հոդ.467, 25.03.2020:

հիմնավորումները հասանելի են հանրությանը, ապա կարգապահական հանձնաժողովի աշխատանքներն իրականացվում են ամբողջովին փակ ընթացակարգերի շրջանակում, վարույթ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումները հասանելի չեն, իսկ վարույթ չհարուցելու վերաբերյալ գրությունները երբեք բովանդակային հիմնավորումներ չեն պարունակում:

Ակնհայտ է, որ նման իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի առկայության պայմաններում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը լուծելու փուլում ի հայտ են գալիս լուրջ կոռուպցիոն ռիսկեր, որոնք հնարավոր է չեզոքացնել միայն գործընթացի թափանցիկության և հանրային վերահսկողության բարձրացման միջոցով:

Արձանագրենք նաև, որ ըստ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության՝ կարգապահական հանձնաժողովի որոշումները ոչ միայն չեն հրապարակվում Դատական իշխանության պաշտոնական կայքում, այլև չեն տրամադրվում հարցման հիման վրա՝ հղում կատարելով վարույթի գաղտնիությանը:

Այսպես, Դատական դեպարտամենտի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝

- **09.04.2018-31.12.2018 թթ.-ի ժամանակահատվածում** ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջի վերաբերյալ **167** հաղորդում. Հանձնաժողովի կողմից հարուցվել է **14** կարգապահական վարույթ⁷,
- **2019 թվականի ընթացքում** Հանձնաժողով ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջի վերաբերյալ **296** հաղորդում. Հանձնաժողովի կողմից հարուցվել է **31** կարգապահական վարույթ⁸,

⁷ Նշված 14 վարույթներից 10-ը հարուցվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով, իսկ 4-ը՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու հիմքով: Հարուցված 14 վարույթներից 13-ի համար առիթ է հանդիսացել անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը, 1-ի համար՝ կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները:

Հարուցված 14 կարգապահական վարույթներից 7-ը կարճվել են, 3 կարգապահական վարույթների քննության արդյունքում որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել Բարձրագույն դատական խորհրդին, իսկ 4 կարգապահական վարույթների քննությունը հաշվետու ժամանակահատվածում գտնվել է անավարտ վիճակում:

Անավարտ 4 վարույթներից 2019 թ.-ին կարճվել են 3-ը, իսկ 1 կարգապահական վարույթի քննության արդյունքում որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել Բարձրագույն դատական խորհրդին:

⁸ Նշված 31 վարույթներից 16-ը հարուցվել են նյութական և դատավարական իրավունքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտումներ թույլ տալու հիմքերով, 15-ը՝ դատավորի վարքագծի կանոնները կոպիտ խախտելու հիմքով: Հարուցված 31 վարույթներից 28-ի համար առիթ է հանդիսացել անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը, 2-ի համար՝ կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները, իսկ 1-ի համար՝ Հանձնաժողովի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

Հարուցված 31 վարույթներից 26-ը կարճվել են, 4 կարգապահական վարույթների քննության արդյունքում որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության

- **01.01.2020-01.07.2020 թթ.-ի** ժամանակահատվածում ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու **114** հաղորդում, որոնցից հարուցվել է **12-ը**, իսկ մնացած **102** հաղորդումները մերժվել են⁹:

Արդարադատության նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝

- **09.04.2018-31.12.2018 թթ.-ի** ընթացքում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) **435** դիմում. նախարարի կողմից հարուցվել է **3** կարգապահական վարույթ¹⁰,
- **2019 թ.-ի** ընթացքում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) **627** դիմում. նախարարի կողմից հարուցվել են **19** կարգապահական վարույթներ¹¹,
- **01.01.2020-01.07.2020 թթ.-ի** ժամանակահատվածում ստացվել է դատական գործերի ընթացքից և դատավորների գործողություններից դժգոհության վերաբերյալ (այդ թվում՝ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ պահանջ բովանդակող) **292** դիմում. նախարարի կողմից հարուցվել են **9** կարգապահական վարույթներ¹²:

Ինչ վերաբերում է կարգապահական հանձնաժողովի որոշումների հրապարակմանը, ինչպես նաև ըստ պահանջի դրանց տրամադրմանը, ապա թե՛ Դատական դեպարտամենտը և թե՛ Արդարադատության նախարարությունը, հղում կատարելով ՀՀ օրենսդրության կարգավորումներին (ՀՀ դատական օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մաս¹³, 148-րդ հոդվածի 6-րդ մաս¹⁴), մատնանշել են, որ Կարգապահական

ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել Բարձրագույն դատական խորհրդին, իսկ 1 կարգապահական վարույթի քննությունը նշված ժամանակահատվածում գտնվել է անավարտ վիճակում:

⁹ Հարուցված 12 վարույթներից 5-ը կարճվել է, 4 կարգապահական վարույթների քննության արդյունքում որոշում է կայացվել դատավորին (դատավորի թեկնածուին) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ դիմել Բարձրագույն դատական խորհրդին, իսկ 3 կարգապահական վարույթների քննությունը նշված ժամանակահատվածում գտնվել է անավարտ վիճակում:

¹⁰ Նշված 3 կարգապահական վարույթներից մեկի հարուցման առիթ է հանդիսացել զանգվածային լրատվության միջոցների հրապարակումը, մյուսի դեպքում՝ փաստաբանի հաղորդումը և վերջինի դեպքում՝ քաղաքացու հաղորդումը:

¹¹ Նշված 19 կարգապահական վարույթներից 7-ի դեպքում հարուցման առիթ է հանդիսացել փաստաբանի հաղորդումը, 6-ի դեպքում՝ պաշտոնատար անձի հաղորդումը, 5-ի դեպքում՝ վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը, 1-ի դեպքում՝ քաղաքացու հաղորդումը:

¹² Նշված 9 կարգապահական վարույթներից 3-ի դեպքում հարուցման առիթ է հանդիսացել փաստաբանի հաղորդումը, 3-ի դեպքում՝ քաղաքացու հաղորդումը, 2-ի դեպքում՝ պաշտոնատար անձի հաղորդումը, 1-ի դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցի հրապարակումը:

¹³ **Վարույթ հարուցող մարմինը պարտավոր է ապահովել կարգապահական վարույթի գաղտնիությունը:** Կարգապահական վարույթի շրջանակներում առաքվող բոլոր փաստաթղթերը պետք է առաքվեն փակ ծրարներով՝ «ծառայողական» դրոշմագրով կամ դրա անհնարինության դեպքում՝ հասցեատիրոջ պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով, որի դեպքում համարվում են

հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, կարճելու, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին որոշումները ՀՀ դատական օրենսգրքով չնախատեսված անձանց չեն տրամադրվում: Միաժամանակ կատարված հարցմանն առ այն, թե «ինչով է պայմանավորված մինչ օրս Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքէջի «Կարգապահական հարցերի հանձնաժողով» բաժնի «Հանձնաժողովի որոշումներ» ենթաբաժնում որևէ տեղեկատվություն չհրապարակելը, Դատական դեպարտամենտը պարզաբանել է, որ «դատական իշխանության նոր պաշտոնական ինտերնետային կայքը (www.court.am) դեռևս գտնվում է փորձարկման փուլում, որի յուրաքանչյուր բաժին և ենթաբաժին ենթակա է խմբագրման»:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու որոշումներ կայացնելու դեպքում դրանցում պատճառաբանվածության առկայության կամ բացակայության խնդրի կապակցությամբ Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ, հիմք ընդունելով Դատական օրենսգրքի կարգավորումները (ՀՀ դատական օրենսգրքի 146-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ և 5-րդ կետեր¹⁵), կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության դեպքում չի կայացվում վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում, այլ հաղորդում ներկայացրած անձին պատասխան գրություն է տրամադրվում վարույթ հարուցելու հիմքերի բացակայության մասին:

Դատական դեպարտամենտը Կարգապահական հանձնաժողովի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու որոշումների կապակցությամբ հիշատակել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 08.11.2018 թվականի՝ «ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի Կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 03L որոշմամբ հաստատված հավելվածի 4.5-րդ կետը, որի համաձայն՝ **Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ չհարուցելու մասին՝** Հանձնաժողովի նիստում անդամների կողմից քննարկելուց և քվեարկելուց հետո **կայացվում է արձանագրային որոշում**, հետևապես այդ որոշումներն արձանագրային են և հասանելի չեն նաև հարցումների դեպքում:

Այսպիսով, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեությունը, ինչպես նաև արձանագրային որոշումների հիմքում ընկած հիմնավորումները լիովին դուրս են մնում հանրային վերահսկողությունից:

Արձանագրենք, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2013 թ.-ի արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույցով ներկայացվել էին

հասցեատիրոջ կողմից ստացված նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվելու պահից: **Կարգապահական վարույթի նյութերը սույն օրենսգրքով չնախատեսված անձանց տրամադրելն արգելվում է:**

¹⁴ Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար միջնորդություն ներկայացնելու մասին որոշումը կայացման պահից եռօրյա ժամկետում ուղարկվում է **Բարձրագույն դատական խորհուրդ, դատավորին և վարույթ հարուցող մյուս մարմին:**

¹⁵ Վարույթ հարուցող մարմինը կատարված ուսումնասիրությունների արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշում կամ չի հարուցում կարգապահական վարույթ: Անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա կարգապահական վարույթ չհարուցելու դեպքում վարույթ հարուցող մարմինն իր պատասխանում նշում է չհարուցելու հիմքերը:

Արդարադատության խորհրդի 2006-2013 թթ.-ին ընդունված բոլոր որոշումների և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 500 դիմումների ընթացքի (2011-2013 թթ.) ուսումնասիրության արդյունքները, որոնք, ի թիվս այլ հետևությունների, հանգել են հետևյալին.

- Վճռաբեկ դատարանի դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ չէր հարուցվում այնպիսի խախտումների դեպքերում, որոնց համար վարույթ էր հարուցվում ստորադաս ատյանի դատարանի դատավորների նկատմամբ.
- նույնաբովանդակ խախտումների արձանագրման դեպքում մի դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չէր հարուցվում, մինչդեռ մեկ այլ դատավորի նկատմամբ կիրառվում էր կարգապահական տույժ¹⁶:

Բոլոր վերոգրյալ խախտումները հնարավոր է եղել բացահայտել բացառապես դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումների/հաղորդումների ուսումնասիրության արդյունքում (որոնք տրամադրվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին):

Այսինքն, հաշվի առնելով ներկայումս դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հարցը լուծելու փուլի ոչ թափանցիկ լինելու հանգամանքը, կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ հաղորդումը ներկայացրած անձանց ուղղված պատասխան գրությունների պատճառաբանվածության բացակայությունը, կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ արձանագրային որոշումների անհասանելիությունը, բացառված էնան արդյունավետ հանրային վերահսկողությունը էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության նկատմամբ՝ կարգապահական վարույթներին առնչվող որոշումների կայացման հարցերով:

Միջազգային իրավունք, փորձագիտական փաստաթղթեր և օտարերկրյա փորձ

Սույն աշխատանքի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել են դատավորների անկախությանը վերաբերող միջազգային հեղինակավոր կառույցների հետևյալ փաստաթղթերը՝

- ՄԱԿ-ի «Դատական մարմինների անկախության սկզբունքները» (1985 թ.)¹⁷,
- Դատարանների անկախության համընդհանուր հռչակագրի նախագիծը (Սինգվիի հռչակագիր), որը կազմվել է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի հատուկ զեկուցողի կողմից (1985 թ.)¹⁸,

¹⁶ Տե՛ս ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույց, <https://www.ombuds.am/images/files/2ddebfe4a4ecb335d3cfd24f3cef719e.pdf>:

¹⁷ Տե՛ս Basic Principles on the Independence of the Judiciary, Adopted by the Seventh United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders held at Milan from 26 August to 6 September 1985 and endorsed by General Assembly resolutions 40/32 of 29 November 1985 and 40/146 of 13 December 1985, <https://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/IndependenceJudiciary.aspx>:

¹⁸ Տե՛ս Draft Universal Declaration on the Independence of Justice (“Singhvi Declaration”), <https://www.icj.org/wp-content/uploads/2014/03/SR-Independence-of-Judges-and-Lawyers-Draft-universal-declaration-independence-justice-Singhvi-Declaration-instruments-1989-eng.pdf>:

- Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատավորների անկախության մասին Կիևյան հանձնարարականը (2010 թ. հունիսի 23-25)¹⁹,
- Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2007 թ.-ի նոյեմբերի 23-ի 10-րդ կարծիքը²⁰,
- Բանգալորյան սկզբունքները և դրանք արդյունավետ ներդնելու միջոցները (ընդունվել է Դատական մարմինների անաչառությունն ու անկաշառությունը ամրապնդող դատավարական խմբի կողմից, ք. Լուկաս, Ջամբիա, հունվարի 21-22, 2010 թ.)²¹,
- Դատարանների ազատության մասին նվազագույն ստանդարտները (1982 թ.)²²,
- Վենետիկի հանձնաժողովի՝ դատական համակարգին վերաբերող մի շարք կարծիքներ²³, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի «Դատական համակարգի անկախության մասին զեկույց. մաս 1, դատարանների անկախությունը» (ընդունվել է հանձնաժողովի 82-րդ նստաշրջանում, 2010 թ.-ի մարտի 12-13-ին)²⁴ և այլ փաստաթղթեր:

Մի շարք միջազգային փաստաթղթերում արձանագրվում է, որ դատավորի դեմ հարուցված կարգապահական վարույթը նախնական քննության փուլում պետք է լինի գաղտնի, եթե դատավորը հակառակը չի պահանջում: Այսինքն՝ այս փաստաթղթերը կարգապահական վարույթի նախնական քննության նիստը դատավորի ցանկության դեպքում դռնբաց անցկացնելու հնարավորություն են տալիս: Նման հնարավորություն արձանագրված է Դատարանների անկախության համընդհանուր հռչակագրի (Սինգվիի հռչակագիր) նախագծի 26-րդ կետում, ՄԱԿ-ի «Դատական մարմինների անկախության սկզբունքներ»-ի 17-րդ կետում, Վենետիկի հանձնաժողովի՝ Վրաստանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կարգապահական վարույթների և պատասխանատվության մասին օրենքի նախագծի վերաբերյալ կարծիքում²⁵:

¹⁹ St´u Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe, South Caucasus and Central Asia, Kyiv, 23-25 June 2010, <https://www.osce.org/odihr/KyivRec?download=true>:

²⁰ St´u Opinion no.10(2007) of the Consultative Council of European Judges (CCJE), <https://rm.coe.int/168074779b>:

²¹ St´u <http://lawlibrary.info/ge/books/giz2011-ru-commentary-to-the-bangalore-principles.pdf>:

²² Ընդունվել է Փաստաբանների միջազգային միավորման (International Bar Association) կողմից 1982 թ.-ին, <https://clck.ru/Pv3F5>:

²³ St´u <https://www.venice.coe.int/webforms/documents/?topic=27&year=all>:

²⁴ St´u Report on Independence of the Judicial System, Part 1, the Independence of Judges, Adopted by the Venice Commission at its 82nd Plenary Session (Venice, 12-13 March 2010), <https://rm.coe.int/1680700a63>:

²⁵ St´u Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (dhr) of the Directorate General of Human rights and rule of law (dgi) of the Council of Europe on the draft law on making changes to the law on disciplinary liability and disciplinary proceedings of judges of general courts of Georgia, Adopted by the Venice Commission at its 100th Plenary Session (Rome, 10-11 October 2014), [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)032-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)032-e):

Դրա հետ մեկտեղ որպես դատարանների անկախության կարևոր երաշխիք թափանցիկության սկզբունքին անդրադարձ է կատարվում բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Վենետիկի հանձնաժողովի «Դատական համակարգի անկախության մասին» զեկույցում, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 կարծիքում և այլ փաստաթղթերում: Վենետիկի հանձնաժողովը, մատնանշված զեկույցում անդրադառնալով դատավորների արդարության ընկալման կարևորությանը, նշում է, որ գործնականում բարդ է այն գնահատելը, և անհրաժեշտ են թափանցիկ ընթացակարգեր ու համապատասխան պրակտիկա: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 կարծիքում շեշտվում է թափանցիկության դերը դատարաններին քաղաքական ճնշումներից պաշտպանելու գործում. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դատական խորհուրդը մեծ մասնակցություն ունի դատական վարչարարության գործերին, պետք է երաշխավորվի այս խորհրդի գործողությունների թափանցիկությունը: Թափանցիկությունը էական գործոն է քաղաքացիների՝ դատական համակարգի նկատմամբ ունեցած վստահության համար և երաշխիք է ինչպես քաղաքական ազդեցության վտանգի և հովանավորչության, այնպես էլ անձնական շահերի և դրանց պաշտպանության դեմ»²⁶:

Կարգապահական վարույթի նախնական փուլի թափանցիկության և դրա արդարության վերահսկման տեսանկյունից մյուս կարևոր հարցը վերաբերում է որոշումների պատճառաբանվածությանն ու հանրայնացմանը: Այս կապակցությամբ հատկանշական է, որ Ղրղզստանի Հանրապետության՝ դատավորների կարգապահական պատասխանատվության իրավակարգավորումների փոփոխությունների վերաբերյալ նախագծի մասին Վենետիկի հանձնաժողովի միացյալ կարծիքում, անդրադառնալով կարգապահական վարույթի նախնական փուլին, նշվում է. «Կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, քանի որ սա թույլ կտա դիմողին գնահատել կայացված որոշման օրինականությունը, ինչպես նաև վերլուծել և հասկանալ բողոքարկման միջոցով ցանկալի արդյունքի հասնելու հնարավորությունը»²⁷:

Կարգապահական վարույթների նախնական փուլի նիստերի դոնբացության, այդ փուլին առնչվող որոշումների հրապարակայնության փորձը պարզելու նպատակով, բացի վերը նշված փաստաթղթերից, ուսումնասիրվել են նաև մի շարք պետությունների օրենսդրություններ դատավորների կարգապահական պատասխանատվության և կարգապահական վարույթի իրավակարգավորումների

²⁶ St' u Opinion no.10(2007) of the Consultative Council of European Judges (CCJE), <https://rm.coe.int/168074779b>:

²⁷ St' u European Commission for Democracy Through Law (Venice Commission) Osce Office for Democratic Institutions and Human Rights (Osce/Odihr) Joint Opinion on the Draft Amendments to the legal framework on the Disciplinary Responsibility of Judges in the Kyrgyz Republic [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2014\)018-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2014)018-e), կետ 94:

վերաբերյալ, ինչպես նաև դրանց՝ կարգապահական վարույթ իրականացնող մարմինների պաշտոնական կայքէջերը²⁸: Այս առումով հատկանշական է Ուկրաինայի, Լիտվայի և ԱՄՆ-ի փորձը:

Ուկրաինայի Հանրապետությունում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցերը կարգավորվում են Ուկրաինայի «Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» և «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին» օրենքներով: Ըստ «Արդարադատության բարձրագույն խորհրդի մասին» օրենքի²⁹ 42-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ուկրաինայում կարգապահական գործերը քննող մարմինը Արդարադատության բարձրագույն խորհրդի Կարգապահական պալատն է, վարույթը բաղկացած է երեք հաջորդական փուլերից՝ 1) բողոքի նախնական ուսումնասիրություն և ստուգում, 2) կարգապահական գործի հարուցում, 3) կարգապահական գործով նիստ և որոշման կայացում՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կիրառումը մերժելու վերաբերյալ:

Մասնավորապես Օրենքի 43-րդ հոդվածով սահմանվել է, որ կարգապահական վարույթ հարուցելու դիմումը նախ ուսումնասիրում է զեկուցողը, որը ստուգում է բողոքը մերժելու կամ վարույթ հարուցելու հիմքերը, ապա եթե բողոքը վերադարձման ենթակա չէ, այն հասցեագրում է Կարգապահական պալատին, որպեսզի վերջինս որոշում կայացնի կա՛մ այն մերժելու, կա՛մ կարգապահական վարույթ հարուցելու մասին: Ջեկուցողի եզրակացությունը պետք է լինի հիմնավորված: Ըստ նույն հոդվածի երկրորդ կետի՝ զեկույցի եզրակացությունը համապատասխան նյութերի հետ ուղարկվում է Պալատ՝ քննարկման համար:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կարգապահական պալատը պետք է քննի զեկուցողի եզրակացությունը, հետազոտի կից նյութերը և ուսումնասիրության տվյալների հիման վրա որոշում կայացնի հարուցել կարգապահական գործ կամ մերժել դրա հարուցումը:

Այս առնչությամբ կարևոր է արձանագրել, որ Կարգապահական պալատի նիստերն անց են կացվում դռնբաց: Օրենքի 30-րդ հոդվածի (վերաբերում է Արդարադատության բարձրագույն խորհրդի և դրա մարմինների նիստերին) 1-ին կետում նշվում է, որ Արդարադատության բարձրագույն խորհրդի և Կարգապահական պալատի նիստերը պետք է լինեն դռնբաց: Նիստերը դռնփակ կարող են անցկացվել միայն բացառիկ դեպքերում, եթե կան օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Ընդ որում,

²⁸ Մասնավորապես [Ավստրալիայի](#), [Արգենտինայի](#), [Ռուսաստանի Դաշնության](#), [Բելառուսի](#), [Էստոնիայի](#), [Բուլղարիայի](#), [Ալբանիայի](#), [Սերբիայի](#), [Մակեդոնիայի](#), [Մեծ Բրիտանիայի](#), [Ֆրանսիայի](#), [Վրաստանի](#), [Ղազախստանի](#), [Իսպանիայի](#), [Պորտուգալիայի](#), [Կանադայի](#), [Լատվիայի](#), [Գերմանիայի](#), [Շվեդիայի](#) օրենսդրությունները և այլն:

²⁹ Տե՛ս Закон України про Вищу раду правосуддя, <https://zakon.rada.gov.ua/laws/show/1798-19#Text>:

սահմանված է, որ նիստը դռնփակ անցկացնելու որոշումը պետք է կայացվի ձայների մեծամասնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Ավելին, Կարգապահական պալատի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, հարուցումը մերժելու որոշումները հրապարակային են և տեղադրվում են Ուկրաինայի Արդարադատության բարձրագույն խորհրդի պաշտոնական կայքէջում և հասանելի են հետևյալ հասցեով՝ <https://hcj.gov.ua/acts?fbclid=IwAR34mUnFFejD5XZ8OzqKx8DIqnnrQ19eZ9uibnRsmmZzuGd6zzfhhbCDT4Ts>:

Մրա հետ մեկտեղ Ուկրաինայի «Դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» օրենքով³⁰ արգելվում է չարաշահել կարգապահական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմնին դիմելու իրավունքը, ներառյալ՝ առանց բավարար հիմքերի օգտագործել կարգապահական պատասխանատվության մասին հաղորդում ներկայացնելու իրավունքը որպես դատավորի նկատմամբ ճնշում գործադրելու միջոց: Մասնավորապես նախատեսված է փաստաբանին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը՝ վերջինիս կողմից գիտակցաբար անհիմն կարգապահական բողոք ներկայացնելու համար: Միաժամանակ սահմանվել է, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չի կարող հարուցվել անանուն հաղորդումների հիման վրա, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար տվյալների բացակայության պայմաններում, իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմում ներկայացրած անձի ստորագրության իսկության և/կամ այդ ստորագրության գոյության հանգամանքների առաջացման դեպքում Արդարադատության բարձրագույն խորհուրդը կարող է նշված անձին հրավիրել իր կողմից ներկայացված դիմումը հավաստելու նպատակով: Անձի կողմից գիտակցաբար անհիմն հաղորդումների ներկայացման կրկնակի դեպքերում Արդարադատության բարձրագույն խորհուրդը իրավունք ունի կայացնելու որոշում այդ անձից ստացված բոլոր հետագա հաղորդումները առանց քննարկման թողնելու մասին՝ մեկ տարի ժամկետով (107-րդ հոդվածի 4-8-րդ մասեր):

Լիտվայի Հանրապետության «Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման առաջին գլխի երկրորդ կետում նշվում է, որ Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը պետք է լինի դատական ինքնավար մարմին, որը որոշում է դատավորների դեմ կարգապահական վարույթներ հարուցելու հարցերը և նպաստում դատավորների էթիկայի ապահովմանը: Նույն փաստաթղթի երկրորդ գլխում սահմանվում են այս մարմնի խնդիրները՝

³⁰ Ст' у Закон України Про судоустрій і статус суддів, <https://zakon.rada.gov.ua/laws/show/1402-19#Text>:

- ժամանակին և պատշաճ քննել դատավորների դեմ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդությունները՝ ըստ կանոնակարգի ընթացակարգերի,
- համապատասխան հիմքի առկայության դեպքում դատավորի դեմ հարուցել կարգապահական վարույթ,
- Պատվո դատարանի հրահանգով կազմակերպել գործի քննությունը և հավաքել լրացուցիչ ապացույցներ գործի փաստական հանգամանքների մասին,
- խորհրդատվություն տրամադրել դատավորի էթիկայի հարցերի մասին,
- կազմակերպել դատավորի էթիկայի խթանումը:

Կանոնադրության այլ կետեր սահմանում են հանձնաժողովի նախագահի գործառույթները վարույթ հարուցելու գործընթացի հետ կապված: Ըստ 35-րդ կետի՝ հանձնաժողովի հանդիպումները պետք է լինեն հրապարակային: Հանձնաժողովի որոշմամբ դոնփակ հանդիպում կարող է անցկացվել անձնական տվյալների, պետական, ծառայողական, առևտրային, մասնագիտական և այլ օրենքներով պաշտպանվող գաղտնիքների պաշտպանության համար, ինչպես նաև այլ օրենքներով նախատեսված սահմանափակումներին համապատասխան: Ըստ 44-րդ կետի՝ հանձնաժողովը միջնորդությունը լսելուց հետո կա՛մ կայացնում է կարգապահական վարույթ հարուցելու որոշում և գործը վերահասցեագրում Պատվո դատարանին, կա՛մ էլ հիմքերի բացակայության պատճառով վարույթ չի հարուցում:

Այսպիսով, Լիտվայում կարգապահական վարույթը քննվում է Պատվո դատարանի կողմից: Կարգապահական վարույթի հարուցման հարցը որոշում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը: Ըստ «Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման³¹ 44-րդ հոդվածի՝ լսելով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը՝ հանձնաժողովը իրավունք ունի. ա) բավարարելու այն, բ) մերժելու կարգապահական վարույթի հարուցումը, գ) կոնկրետ պայմանների առկայության դեպքում հետաձգելու վարույթ հարուցելու մասին որոշման կայացումը և, ըստ գործի առանձնահատկությունների, դիմելու համապատասխան գործողությունների, օրինակ՝ լրացուցիչ տեղեկատվություն հավաքելու և այլն: Համաձայն 46-րդ հոդվածի՝ հանձնաժողովի որոշումները՝ ներառյալ ներածությունը, բացատրական մասը, հիմնավորումները և եզրակացությունը, պետք է կազմվեն որոշում կայացնելու պահից 30-օրյա ժամկետում: 47-րդ հոդվածը ավելի է մանրամասնում որոշման մեջ արտացոլվող տեղեկատվությունը՝ հանձնաժողովի անվանումը, լսումներին մասնակցող հանձնաժողովի անդամների անունները, լսումների վայրը և ժամը, լսման առարկա հարցը, կարգապահական վարույթի

³¹ Տե՛ս «Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշում, Վիլնյուս, հունվարի 25, 2019 թ., <https://www.teismai.lt/en/self-governance-of-courts/judicial-ethics-and-discipline-commission/about-commission/667>:

սուբյեկտ դատավորի անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, կարգապահական վարույթը հարուցող անձի տվյալները, հանձնաժողովի քարտուղարի անունը, այն ակտը, որի հիման վրա դատավորը ենթարկվում է կարգապահական քննության, այլ հանգամանքներ, որ հաշվի են առնվել որոշման մեջ, և այն փաստարկները, որ հանձնաժողովը դրել է իր եզրակացության հիմքում: Եթե հանձնաժողովի որոշումը հղում է կատարում անձանց անուն-ազգանուններին, ապա հրապարակային տարբերակում անձանց անունները և ազգանունները փոխարինվում են տառերով, որոնք չեն համապատասխանում այդ անձի իրական անվան և ազգանվան սկզբնատառերին: Այս դրույթը չի տարածվում այն դատավորների նկատմամբ, որոնց հանդեպ հարուցվել է կարգապահական վարույթ: Այսպիսով, Լիտվայի օրենսդիրը տարբերակում չի դնում վարույթի հարուցումը մերժելու կամ բավարարելու մասին որոշումների միջև և սահմանում է դրանց պարտադիր հրապարակման պարտականություն: Սակայն եթե կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, ապա դատավորի անունը չի հրապարակվում, այսինքն՝ կիրառվում է սկզբնատառերի՝ վերը նշված մեթոդը³²:

Ըստ «Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» որոշման 50-րդ կետի՝ որոշումները պետք է հրապարակվեն ստորագրելուց հետո 10 օրվա ընթացքում՝ չիսխտելով պետական, ծառայողական, առևտրային, մասնագիտական և օրենքով պաշտպանվող այլ գաղտնիքներ, ինչպես նաև այլ սահմանափակումներ և արգելքներ: Դոնփակ նիստերի դեպքում պետք է հրապարակվեն հանձնաժողովի որոշումների եզրափակիչ մասերը:

Թե՛ Պատվո դատարանի, թե՛ Դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կայացրած որոշումները հրապարակվում են www.teismai.lt կայքում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում դատավորների կարգապահական պատասխանատվության թափանցիկության և հրապարակայնության առաջադեմ և հավասարակշռված դրույթներ են պարունակում «Դատավորի վարքագծի և հաշմանդամության մասին» օրենքը³³, «Դատավորի վարքագծին և հաշմանդամությանն առնչվող ընթացակարգային կանոններ» փաստաթուղթը³⁴: Այս իրավական ակտերը վերաբերում են ԱՄՆ-ի վերաքննիչ, շրջանային, սնանկության դատարանների դատավորներին, հաշտարար, Դաշնային պահանջների դատարանի, Միջազգային առևտրի դատարանի, Դաշնային շրջանի վերաքննիչ դատարանի դատավորներին:

³² Նման որոշման օրինակ կարելի է տեսնել հետևյալ հղմամբ՝ https://www.teismai.lt/data/public/uploads/2020/07/tedk-sprendimas-del-s.-bliudsukio_j.r.-su-pakeitimais_jpk.docx:

³³ Տե՛ս https://www.law.cornell.edu/uscode/text/28/part-I/chapter-167fbclid=IwAR2Wlg_xIxRiDIIhPO8sJMoUGodxWSgE6saKMIxcFoexN1HTEgOjjZdA_c:

³⁴ «Դատավորի վարքագծին և հաշմանդամությանն առնչվող ընթացակարգային կանոններ», <https://www.law.cornell.edu/uscode/text/28/360>:

Փաստաթղթի 11-րդ կանոնի համաձայն՝ դատավորի դեմ կարգապահական վարույթին առաջինն ընթացք տվող մարմինը՝ գլխավոր դատավորը, բողոքի վերաբերյալ պետք է կայացնի հետևյալ որոշումներից մեկը՝ ա. մերժի այն, բ. հանգուցալուծի այն հիմքով, որ վիճակը կամավոր շտկվել է, գ. հանգուցալուծի, քանի որ չնախատեսված հանգամանքների պատճառով բողոքին ընթացք տալն այլևս անիմաստ է, դ. վերահասցեագրի Հատուկ կոմիտեին: Արձանագրվում է, որ գլխավոր դատավորի որոշումները պետք է հրապարակվեն ժամանակին, 24-րդ կանոնով սահմանված եղանակով և չափով: Ընդ որում, որոշումների հրապարակայնության պայմանները շարադրված են նաև կարգապահական վարույթի քննության հետագա փուլերի համար, սակայն քանի որ սույն աշխատանքի հիմնական առարկան քննության նախնական փուլն է, որն այս դեպքում իրականացնում է գլխավոր դատավորը, ապա անդրադարձ է կատարվել հիմնականում այս ոլորտի կարգավորումներին:

Որոշումների հրապարակայնության և գաղտնիության սկզբունքները հավասարակշռում են համապատասխանաբար 23-րդ (կոնֆիդենցիալություն) և 24-րդ (որոշումների հանրային հասանելիություն) կանոնները: Ըստ այս կանոնների՝ «գաղտնիության նպատակը բողոքի ներկայացման կամ նախաձեռնման գործընթացի (նաև հատուկ դեպքերում՝ հետաքննության և ի վերջո՝ լուծման) արդարությունը և ամբողջականությունն ապահովելն է»: Այդ է պատճառը, որ բողոքի քննությունը գլխավոր դատավորի, հատուկ կոմիտեի, դատական խորհրդի կամ Դատական վարքագծի և հաշմանդամության հարցերի կոմիտեի կողմից գաղտնի է, և քննությանն առնչվող որևէ անձ չպետք է բացահայտի դրա մասին որևէ տեղեկատվություն: Այնուամենայնիվ, կան բացառություններ, և պետք է մատնանշել, որ դրանից առաջինի հիմքում հենց դատական համակարգի նկատմամբ վստահությունն է: Որպես նախորդիվ շարադրված ընդհանուր կանոնի բացառություն՝ նշվում է, որ գլխավոր դատավորը, Դատական խորհուրդը կամ Դատական վարքագծի և հաշմանդամության հարցերի կոմիտեն կարող են բացահայտել վարույթի առկայության մասին տեղեկատվությունը ըստ այս կանոնների, երբ անհրաժեշտ է կամ տեղին, որ պահպանվի հանրային վստահությունը դատական համակարգի՝ սխալ վարքագծի կամ հաշմանդամության վերաբերյալ հարցը լուծելու նկատմամբ: Նույն կանոնի մեկնաբանությունում, անդրադառնալով այս կանոնին, ասվում է, որ այսպիսի արտառոց դեպքերում հակասական կամ հանրային բարձր հնչեղություն ունեցող գործերով նման տեղեկատվության բացահայտման նպատակը վստահեցնելն է հասարակությանը, որ դատական համակարգն ունակ է վերականգնելու դատական սխալ վարքագիծը:

Ստորև նշված են մյուս բացառությունները, ըստ որոնց՝ բողոքի սուբյեկտ հանդիսացող դատավորի համաձայնության, որոշ հատուկ հանգամանքների, ինչպես նաև որոշումների հեղինակների ցանկության դեպքում որոշ տվյալներ կամ ամբողջական նյութեր կարող են դառնալ հրապարակային: Այսպես՝

- Եթե 24-րդ կանոնով այլ բան սահմանված չէ, գլխավոր դատավորի, Դատական խորհրդի կամ Դատական վարքագծի ու հաշմանդամության մասին հարցերի կոմիտեի գրավոր որոշումները և խորհրդի կամ կոմիտեի հատուկ կարծիքները կամ հայտարարությունը կարող են պարունակել տեղեկատվություն և տվյալներ, որոնց ներառումը հեղինակներն անհրաժեշտ կհամարեն, և, ըստ այդմ, դրանք կարող են հրապարակայնացվել:
- Եթե թե՛ դատավորը, որի դեմ բողոք է ներկայացվել, թե՛ գլխավոր դատավորը գրավոր համաձայնում են, ապա փաստաթղթերից ցանկացած նյութ կարող է հասանելի դառնալ ցանկացած անձի: Ցանկացած նման հրապարակայնացման դեպքում գլխավոր դատավորը պետք է ապահովի, որ վկաների կամ բողոքաբերի ինքնությունը չբացահայտվի (7-րդ կետ):
- **Բացահայտումը հատուկ հանգամանքներում:** Դատական ժողովը, Դատական վարքագծի կամ հաշմանդամության հարցերի կոմիտեն, Դատական խորհուրդը կամ գլխավոր դատավորը կարող են թույլատրել տեղեկատվության բացահայտումը բողոքի քննության, այդ թվում՝ փաստաթղթերի և սղագրությունների մասին այն չափով, որ այն չհակասի կանոններին և արդարացված լինի հատուկ հանգամանքներով, ինչպես նաև արգելված չլինի օրենքով: Օրինակ՝ կարող է հասանելի դառնալ Դատական ժողովի կամ Դատական վարքագծի և հաշմանդամության հարցերի կոմիտեի հաստատմամբ հետազոտություն իրականացնող անձանց, որ ուսումնասիրում և գնահատում են այս օրենքի փորձը: Համապատասխան քայլեր պետք է արվեն բողոքի սուբյեկտ հանդիսացող դատավորի, բողոքաբերի, վկաների ինքնության գաղտնիությունը պաշտպանելու նպատակով: Պետք է լինեն այլ երաշխիքներ գաղտնի տեղեկատվության չտարածման համար (8-րդ կետ):
- Ոչինչ այս Կանոններում չի արգելում բողոքի սուբյեկտ հանդիսացող դատավորին ընդունել, որ ինքն այն դատավորն է, որին վկայակոչել են 24-րդ կանոնով հրապարակային դարձած փաստաթղթերում (9-րդ կետ):

Այսպիսով, Կանոնները թեպետ նախատեսում են բողոքի սուբյեկտ հանդիսացող դատավորների անձի չբացահայտումը հրապարակվող մի շարք փաստաթղթերում, սակայն նաև հնարավորություն են տալիս նրանց իրենց կամքով նույնականացվելու, համաձայնելու, որ հասանելի դառնան իրենց մասնակցությամբ վարույթի գործերը:

Հարկ է ընդգծել նաև «8 Ե» կետի այն մեկնաբանությունը, ըստ որի, եթե բողոքաբերը կամ այլ անձ հրապարակային է դարձրել վարույթի գոյության փաստը, Դատական ժողովը, Դատական վարքագծի և հաշմանդամության հարցերի կոմիտեն, Դատական խորհուրդը կամ գլխավոր դատավորը կարող են թույլատրել բացահայտումը բողոքի քննության մասին, այդ թվում՝ դրան առնչվող կարգադրություններ կամ այլ նյութեր՝ հավաստիացնելու հանրությանը, որ դատական համակարգը գործում է արդյունավետ և արագ համապատասխան բողոքի վարույթի հետ կապված միջոցներ ձեռնարկելիս:

24-րդ կանոնը մանրամասն սահմանում է, թե ինչ տեղեկատվություն կարող է հրապարակվել և ինչպես: Արժե նշել, որ կարգապահական վարույթներին առնչվող

նյութերը կարող են հրապարակվել միայն այն ժամանակ, երբ բողոքի վերաբերյալ կայացվել է վերջնական որոշում, և այն այլևս վերանայման ենթակա չէ: Գլխավոր դատավորի և Դատական խորհրդի բոլոր որոշումները, հատուկ կարծիքները կամ հայտարարությունները, ինչպես նաև որոշ այլ նյութեր պետք է հրապարակվեն հետևյալ բացառություններով.

1. Հրապարակայնորեն հասանելի նյութերն ընդհանուր առմամբ չպետք է բացահայտեն դատավորի անունն առանց նրա համաձայնության, եթե բողոքը վերջնական մերժվել է կանոն 11-ի համաձայն կամ հանգուցալուծվել նույն կանոնի «դ» կետի համաձայն (վիճակի շտկման կամավոր գործողություններ):
2. Եթե բողոքը հանգուցալուծվել է չնախատեսված հանգամանքների պատճառով կամ հատուկ կոմիտեի նշանակումից հետո որևէ պահի, Դատական խորհուրդը պետք է որոշի՝ արդյո՞ք պետք է հրապարակվի դատավորի անունը:
3. Եթե բողոքը հանգուցալուծվել է գաղտնի եղանակով հաղորդակցված նկատողությամբ կամ դիտողությամբ, հրապարակայնորեն հասանելի նյութերը չպետք է բացահայտեն ո՛չ դատավորի անունը, ո՛չ էլ նկատողության տեքստը:
4. Եթե բողոքի քննությունն ավարտվել է կանոն 20 Ե 1-ի ցանկացած շտկող գործողությամբ, ոչ թե գաղտնի եղանակով հաղորդակցված նկատողությամբ կամ դիտողությամբ, ապա ավարտելու կարգադրության տեքստը պետք է ներառվի հանրայնացված փաստաթղթերում, և դատավորի անունը պետք է հրապարակվի:
5. Բողոքաբերի անունը որևէ դեպքում չպետք է բացահայտվի այս կանոնով հրապարակայնացված փաստաթղթերում, եթե գլխավոր դատավորը կամ Դատական խորհուրդը չեն արձակում բացահայտման հրաման:

Նշված իրավական ակտերի կարգավորման առարկա դատարանների ցանկը ակտիվ հղումներով հասանելի է, դրանց կայքերում հնարավոր է տեսնել տարբեր տարիների կարգապահական գործերով որոշումներ³⁵, իսկ <https://www.ca1.uscourts.gov/2020> կայքում հասանելի են Առաջին շրջանի վերաքննիչ դատարանի գլխավոր դատավորի՝ 2020 թ.-ի կարգադրությունները:

Ինչ վերաբերում է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության սահմանման խնդրին, ապա այս առնչությամբ ուսումնասիրվել են Ռուսաստանի Դաշնության³⁶, Բելառուսի³⁷, Ուկրաինայի³⁸, Վրաստանի³⁹, Մոլդովայի⁴⁰, Լատվիայի⁴¹, Լիտվայի⁴²,

³⁵ Տե՛ս <https://www.uscourts.gov/judges-judgeships/judicial-conduct-disability>:

³⁶ Տե՛ս Кодекс об административных правонарушениях РФ, <http://base.garant.ru/12125267/>:

³⁷ Տե՛ս Кодекс Республики Беларусь об административных Равонарушениях, https://kodeksy-by.com/koap_rb.htm:

³⁸ Տե՛ս Кодекс України про адміністративні правопорушення, <https://zakon.rada.gov.ua/laws/show/80731-10#Text>:

³⁹ Տե՛ս Administrative Offences Code of Georgia, <https://matsne.gov.ge/en/document/view/28216?publication=381>:

⁴⁰ Տե՛ս The Contravention Code of the Republic of Moldova, <https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/86500/97673/F144678591/MDA86500.pdf>:

Էստոնիայի⁴³, Բուլղարիայի⁴⁴, Ֆրանսիայի⁴⁵, Գերմանիայի⁴⁶, Կանադայի⁴⁷, Ղազախստանի⁴⁸, Իսպանիայի⁴⁹, Ալբանիայի⁵⁰, Սերբիայի⁵¹, Մակեդոնիայի⁵², Արգենտինայի⁵³ օրենսդրությունն ու փորձը և նմանատիպ կարգավորումներ չեն հայտնաբերվել: Նման կարգավորումներ չի հաջողվել գտնել նաև Շվեդիայի⁵⁴, Նորվեգիայի⁵⁵, Ավստրալիայի⁵⁶ և Մեծ Բրիտանիայի⁵⁷ կողմից կայացված օրենսդրության շրջանակներում:

Ամփոփում

Այսպիսով կարող ենք փաստել, որ ինչպես Ուկրաինայի և Լիտվայի, այնպես էլ ԱՄՆ իրավակարգավորումները մի կողմից արդյունավետորեն երաշխավորում են դատավորի հեղինակության պաշտպանությունը վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու վերաբերյալ անհիմն դիմումներ ներկայացվելու դեպքերում, իսկ մյուս կողմից ապահովում են կարգապահական վարույթների թափանցիկությունը և հանրային վերահսկողությունը՝ այդպիսով հավասարակշռելով վերոնշյալ պահանջները:

Գտնում ենք, որ նմանօրինակ մոդելը կարող է արդյունավետ կիրառվել նաև մեր իրավական համակարգում՝ ապահովելով դատական իշխանության անկախությունը և արդյունավետությունը, դատավորների բարեվարքությունը և հանրային հաշվետվողականությունը, որը կնպաստի նաև հանրային վստահության հաստատմանը դատական իշխանության նկատմամբ:

⁴¹ Sē u Latvijas Administratīvo pārkāpumu kodekss, http://europam.eu/data/mechanisms/FD/FD%20Laws/Latvia/Latvia_Administrative%20Violations%20Code_19_85,%20amended%202016_LV.pdf:

⁴² Sē u The Republic of Lithuania Code of Administrative Offences, http://europam.eu/data/mechanisms/PF/PF%20Laws/Lithuania/Lithuania_Code%20of%20administrative%20offences_1985_amended2016_eng.pdf:

⁴³ Sē u <https://www.riigiteataja.ee/>:

⁴⁴ Sē u Административный Кодекс Болгарии, <http://bulgaris.ru/Admkodeks001.html>:

⁴⁵ Sē u Loi n° 2000321 du 12 avril 2000 relative aux droits des citoyens dans leurs relations avec les administrations, http://europam.eu/data/mechanisms/FOI/FOI%20Laws/France/France_Law%20no.%202000-321_consolidated%202016_FR.pdf:

⁴⁶ Sē u Act on Regulatory Offences, https://www.gesetze-im-internet.de/englisch_owig/englisch_owig.pdf:

⁴⁷ Sē u <https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/o-5/>:

⁴⁸ Sē u Кодекс Республики Казахстан об административных правонарушениях, <http://www.parliament.am/library/varchakaniravaxaxtum19/xazaxstan.pdf>:

⁴⁹ Sē u Código de Derecho Administrativo, https://www.boe.es/biblioteca_juridica/codigos/abrir_pdf.php?fich=044_Codigo_de_Derecho_Administrativo.pdf:

⁵⁰ Sē u <http://drejtesia.gov.al/legjislacioni-i-brendshem-2/>:

⁵¹ Sē u <http://www.pravno-informacioni-sistem.rs/reg-overview>:

⁵² Sē u <https://ldbispravda.gov.mk/Prebaruvanje.aspx>:

⁵³ Sē u <https://www.boletinoficial.gov.ar/>:

⁵⁴ Sē u <https://www.riksdagen.se/en/documents-and-laws/>:

⁵⁵ Sē u <https://www.regjeringen.no/en/find-document/acts-and-regulations/id438754/>:

⁵⁶ Sē u <https://www.legislation.gov.au/Browse/ByTitle/Acts/InForce/0/0/All/>:

⁵⁷ Sē u <https://www.legislation.gov.uk/>:

Առաջարկություններ

Ազգային ժողովին և Կառավարությանը՝ նախաձեռնել փոփոխություններ ՀՀ դատական օրենսգրքում՝ ապահովելով էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի աշխատանքի թափանցիկությունը և հանրային վերահսկողության հնարավորությունը՝ հանձնաժողովի բոլոր որոշումների (այդ թվում՝ արձանագրային) հրապարակման հնարավորության նախատեսմամբ, դրանք պատճառաբանված լինելու պարտադիր պայմանի սահմանմամբ: Մինևույն ժամանակ դատավորի հեղինակության պաշտպանությունը ապահովելու նպատակով կարող են սահմանվել հատուկ միջոցներ. օրինակ՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում՝ դատավորի և այլ անձանց անուն-ազգանունների տվյալների չներառում:

Համանման իրավակարգավորում սահմանել նաև ՀՀ արդարադատության նախարարության կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ գրությունները հրապարակելու վերաբերյալ՝ բովանդակային պատճառաբանական մասի ներառմամբ: